ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/161

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԾՁԲ-21/119» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, հողաբարելավման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9742-2021 գրությամբ «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 04.06.2021թ.-ի թիվ 01/61-13144 գրության հիման վրա, 16.06.2021թ.-ին «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 16.06.2021թ.-ին:

16.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/161 համարի ծածկագիրը:

25.06.2021թ.-ին և 09.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.06.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.07.2021թ.-ին:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 04.06.2021թ.-ի թիվ 01/61-13144 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից 28.04.2021 թվականին հայտարարվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/119» ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Աննա Աղաջանյան» Ա/Ձ-ն (այսուհետ՝ Մասնակից) և գնահատող հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է ընտրված մասնակից:

Անգործության ժամկետի ավարտից հետո, օրենքով սահմանված կարգով 18.05.2021 թվականին Մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ: Օրենսդրությամբ սահմանված ժամկետում Մասնակցի կողմից պատվիրատուի էլեկտրոնային փոստին է ներկայացվել «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/119» ծածկագրով պայմանագրի նախագիծը, պայմանագրի և որակավորման ապահովումները՝ տուժանքի ձևով վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդված 2-րդ և 3-րդ մասերը, 454-րդ հոդվածի 4-րդ մասը, «էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 1-ին, 2-րդ և 5-րդ հոդվածները, ՀՀ Կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 13) ենթակետը՝ մերժել է Մասնակցի կողմից նման եղանակով ներկայացված պայմանագրի նախագիծը:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Կից Ձեզ են տրամադրվում գնման ընթացակարգի համապատասխան փաստաթղթերի պատճենները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/119» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 16.06.2021թ.-ին գրությամբ դիմել է «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9742-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Մասնակիցը 18.06.2021թ.-ի ներկայացրած դիրքորոշմամաբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարության 16.06.2021թ. թիվ 26/26-1/9742-2021 գրությամբ «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգի

վերաբերյալ իմ կարծիքն է՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին (այսուհետ՝ Բողոքներ քննող անձ) Երևանի քաղաքապետարանի ներկայացրած նյութերը համապատասխան հիմքեր չունեն «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու,քանի որ

1. առկա է իմ կողմից քովիդով վարակված լինելու հանգամանքը՝ հիմք «Սուրբ Գրիգոր Աուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից 07.06.2021 թ-ին տրված №2288 քաղվածքը, ՀՀ առողջապահության նախարարության հաղորդագրությունը,

2. ես գործել եմ <<ԵՔ-ԳՀԾՁԲ-21/119>> ծածկագրով մրցույթի հրավերի 9.5, 9.6 կետերին համապատասխան, այսինքն ժամկետների մեջ և՝ ստորագրել եմ պահանջվող փաստաթղթերը, և՝ armeps համակարգով ընդունել եմ պայմանագրի շնորհումը

3. ՀՀ ֆինանսների նախարարության գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ես արդեն բողոքարկել էի Երևանի քաղաքապետարանի <<ԵՔ-ԳՀԾՁԲ- 21/119» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 02.06.2021 թ-ին կայացրած որոշումը, այն է՝ մերժել իմ կողմից պատվիրատուի՝ Երևանի քաղաքապետարանի էլեկտրոնային փոստին մուտքագրած, իմ էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված <<ԵՔ-ԳՀԾՁԲ-21/119» ծածկագրով պայմանագրի նախագիծը, պայմանագրի և որակավորման ապահովումները՝ փուժանքի ձևով, կից գրությունը և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ընթացակարգի հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<Կորյուն Ժամհարյան Սոսիկի» ԱՁ-ին: Բողոքիս ծածկագիրն է ԳԲՔԱ-ԼՕ-2021/45:

ՀՀ Ֆինանասների նախարարի պաշտոնակատարին ուղղված Երևանի քաղաքապետարանի 04.06.2021թ.-ի №01/61-13144 գրության մեջ հիշատակված օրենքները գրելու ժամանակ հողագնդի վրա կորոնավիրուս չի եղել, օրենքները գրելու ժամանակ հաշվի չեն առնվել հնարավոր ֆորս-մաժորային իրավիճակները՝ այս դեպքում համաճարակները, ու դա օրենքների թերություններն են ու անկատար լինելը: Այնուամենայնիվ անհաղթահարելի ուժի ազդեցությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի’’’’’’այլնի տարբեր հոդվածների տարբեր կետերով: ՀՀ ֆինանսների նախարարության Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին առաջարկում եմ հարցում կատարել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ին, ՀՀ առողջապահության նախարարություն և նրանք հստակ կպատասխանեն, թե քովիդի պայմաններում ինչպիսին պետք է լինեին Երևանի քաղաքապետարանի գործողությունները կոնկրետ <<ԵՔ-ԳՀԾՁԲ-21/119» ծածկագրով ընթացակարգի հետ կապված: Իսկ իմ գործունեությունը <<ԵՔ-ԳՀԾՁԲ-

21/119» ծածկագրով ընթացակարգի հետ կապված լիովին համապատասխանում է իրավանորմերին՝ քովիդի պայմաններում: ՀՀ Ֆինանասների նախարարի պաշտոնակատարին ուղղված Երևանի քաղաքապետարանի 04.06.2021թ-ի №01/61-13144 գրության կից նյութերի վերաբերյալ հայտնում եմ, որ

1. Արձանագրություն №3-ում կան անճշտություններ բանակցություններին մասնակցել ենք միայն ես և Կորյուն ժամհարյանը, որն էլ գնային առաջարկը նվազեցրել և հասցրել է 45000 դրամի, այլ ոչ թե 48000:

2. ՀՀ Ֆինանասների նախարարի պաշտոնակատարին ուղղված Երևանի քաղաքապետարանի 04.06.2021թ-ի №01/61-13144 գրության կից նյութերի մեջ բացակայում են Երևանի քաղաքապետարանի 27.05.2021թ. №61/64187հ գրությանը ի պատասխան 01.06.2021թ-ի իմ 2 գրությունները, որոնք ևս ներկայացրել եմ Երևանի քաղաքապետարանի էլեկտրոնային փոստին (բանալի 2049188): Այստեղ միտում կա՞, թե՝ոչ:

3. ՀՀ Ֆինանասների նախարարի պաշտոնակատարին ուղղված Երևանի քաղաքապետարանի ոչ մի գրության և կից նյութերի մեջ, ոչ մի արձանագրության մեջ ոչ մի խոսք չկա այն մասին, որ ես ժամկետների մեջ նաև armeps համակարգով ընդունել եմ «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/119» ծածկագրով պայմանագրի շնորհումը: Այստեղ միտում կա՞, թե՝ոչ:

4. ՀՀ Ֆինանասների նախարարի պաշտոնակատարին ուղղված Երևանի քաղաքապետարանի ոչ մի գրության և կից նյութերի մեջ առկա են կրկնություններ: Դրանք ինքնանպատա՞կ են:

Մեկ անգամ ևս տեղեկացնում եմ, որ որպես «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/119» ծածկագրով մրցույթի առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/119» ծածկագրով պայմանագրի նախագիծը, պայմանագրի և որակավորման ապահովումները՝ փուժանքի ձևով, կից գրությունը ես սահմանված ժամկետում՝ 21.05.2021 թ.ին ներկայացրել եմ պատվիրատուի՝ Երևանի քաղաքապետարանի էլեկտրոնային ւիոստին (բանալի 2042213), ինչպես նաև armeps համակարգով ընդունել եմ պայմանագրի շնորհումը: Իսկ անձամբ ձեռագիր ստորագրությամբ վերոնշյալ փաստաթղթերը պատվիրատուին՝ Երևանի քաղաքապետարանին չեմ կարողացել ներկայացնել որովհետև ես վարակված եմ եղել կորոնավիրուսով և 04.06.2021 թ-ը ներառյալ գտնվել եմ ինքնամեկուսացման մեջ առկա է ՀՀ առողջապահության նախարարության հստակ հրահանգը հաղորդագրության տեսքով առնվազն 14 օր ինքնամեկուսացում՝ վարակը կանխելու նպատակով, ինչպես նաև առկա է «Սուրբ Գրիգոր Առաավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից 07.06.2021թ-ին տրված №2288 քաղվածքը: Եթե ես հիվանդության ընթացքում Երևանի քաղաքապետարան առձեռն, իմ ձեռագիր

ստորագրությամբ ներկայացնեի վերոնշյալ փաստաթղթերը կստացվեր որ ես վարակը տարածում եմ: Տեղեկացնում եմ նաև, որ 01.06.2021 թ-ին իմ էլեկտրոնային փոստին եմ ստացել Երևանի քաղաքապետարանի 27.05.2021թ. №61/64187հ գրությունը, որին պատասխանել եմ նույն օրը՝ 01.06.2021թ-ին 2 գրություններով, որոնք ևս ներկայացրել եմ պատվիրատուի՝ Երևանի քաղաքապետարանի էլեկտրոնային փոստին (բանալի 2049188) և տեղեկացրել եմ, որ վարակված եմ կորոնավիրոսով ու 04.06.2021 թ-ը ներառյալ գտնվում եմ ինքնամեկուսացման մեջ, որի ավարտից հետո՝ 07.06.2021թ-ին կարող եմ իմ ձեռագիր ստրագրությունով ներկայացնել վերոնշյալ փաստաթղթերը: Հետաքրքիր է ինչու՞ 27.05.2021 թ-ով թվագրված Երևանի քաղաքապետարանի N261/64187հ գրությունը ես իմ էլեկտրոնային փոստին ստացել եմ միայն 01.06.2021 թ-ին, իսկ Հայփոստից միայն 07.06.2021թ-ին են ինձ տեղեկացրել, որ Երևանի քաղաքապետարանից նամակ ունեմ: Այստեղ միտում կա, թե ոչ: Տեղեկացնում եմ նաև, որ իմ հիվանդության մասին ես «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/119» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղարին հեռախոսով բազմիցս տեղեկացրել եմ նաև մինչև 01.06.2021 թ-ը: Հեռախոսազանգերի վերծանումը հնարավոր է, և եթե դրանք ձայնագրվում են Երևանի քաղաքապետարանում՝ շատ ավելի լավ: Տարօրինակ է, որ Երևանի քաղաքապետարանը հաշվի չառնելով իմ կորոնավիրոսով վարակված լինելու հանգամանքը, նույնիսկ իրենց վարակվելու հավանականությունը հաշվի չառնելով՝ որոշում է կայացնում մերժել իմ կողմից էլեկտրոնային տարբերակով ներկայացրած, իմ էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված պահանջվող փաստաթղթերը և պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացնում ընթացակարգի հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին: Ավելի ճիշտ չէր լինի եթե այդ պահին Երևանի քաղաքապետարանը պահանջվող փաստաթղթերը ընդուներ այդ տարբերակով՝ իմ էլեկտրոնային ստորագրությամբ), իսկ ընդամենը 2 աշխատանքային օր հետո՝ 07.06.2021թ-ին, ինքնամեկուսացման ավարտից հետո կներկայացնեի արդեն ձեռագիր ստորագրությամբ, նամանավանդ որ կա հարգելի պատճառ՝ հիվանդություն, ես էլ արդեն armeps համակարգով ընդունել էի պայմանագրի շնորհումը: Ու այնպես չէր որ այս գնումը շատ շտապ պետք էր Երևանի քաղաքապետարանին՝ պայմանագրի կատարման ժամկետ էր սահմանված մինչև սույն թվականի նոյեմբերի վերջը: Իսկ շատ հետաքրքիր է ի՞նչ միջոցներ կկիրառեր իմ նկատմամբ ՀՀ առողջապահության նախարարությունը, եթե ես ինքնամեկուսացման մեջ գտնվելով հանդերձ անձամբ ձեռագիր ստորագրությամբ փաստաթղթեր ներկայացնեի Երևանի քաղաքապետարան:

Այսպիսով՝ ես գործել եմ «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/119» ծածկագրով մրցույթի հրավերի 9.5, 9.6 կետերին համապատասխան, այսինքն ժամկետների մեջ և ստորագրել եմ պահանջվող փաստաթղթերը, և՛ armeps համակարգով ընդունել եմ պայմանագրի շնորհումը: Հիմքեր չկան ինձ հետ պայմանագիր չկնքելու, առավել ևս «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու: Հարցը միայն այն է, որ քովիդով վարակված լինելու պատճառով գրավոր ստորագրությամբ չեմ կարողացել ներկայացնել պահանջվող փաստաթղթերը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ մերժել, չեղյալ համարել <<ԵՔ-ԳՀԾՁԲ-21/119» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 02.06.2021 թ-ին կայացրած որոշումը, պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին պայմանագիրը կնքել ինձ հետ:

Այսպիսով՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացրած նյութերը համապատասխան հիմքեր չունեն «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու,քանի որ առկա է իմ կողմից քովիդով վարակված լինելու հանգամանքը՝ հիմք «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից 07.06.2021թ ին տրված №2288 քաղվածքը; ես գործել եմ <<ԵՔ-ԳՀԾՁԲ-21/119» ծածկագրով մրցույթի հրավերի 9.5, 9.6 կետերին համապատասխան, այսինքն ժամկետների մեջ և՝ ստորագրել եմ պահանջվող փաստաթղթերը, և՝ armeps համակարգով ընդունել եմ պայմանագրի շնորհումը: Ամփոփելով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ.Օհանյանին խնդրում եմ կասեցնել, չեղարկել 16.06.2021 թ-ին նախաձեռնված ՍՅ-ԼՕ-2021/161 ծածկագրով ընթացակարգը, պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին պայմանագիր կնքել ինձ հետ:»:

4. <u>ՍՅ-ԼՕ-2021/161 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի կողմից Նորք-Մարաշ վարչական շրջանի փաստաթղթերի արխիվացման՝ գիտահետազոտական մշակման ծառայությունների

ձեռքբերման նպատակով 28.04.2021թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/119» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 11.05.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 5.1-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ն:

iv. 12.05.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր:

v. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 18.05.2021թ.-ին armeps.am համակարգի միջոցով Բողոքաբերի annaagadjanyan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է պայմանագրի նախագիծը և վերջինիս առաջարկվել է կնքել և երկու օրինակից ներկայացնել պայմանագիրը 10 աշխատանքային օրվա ընթացքում:

vi. Հանձնաժողովի 02.06.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը ընդունել է ի գիտություն, որ «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ին, որպես ընտրված մասնակից, 18.05.2021թ.-ին ներկայացրել է ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ: Վերջինս պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 01.06.2021թ.-ը/ պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջներին համաձայն: Սակայն օրենսդրությամբ սահմանած ժամկետում մասնակցի կողմից պատվիրատուի էլեկտրոնային փոստին է ներկայացվել պայմանագրի նախագիծը, պայմանագրի և որակավորման ապահովումները՝ տուժանքի ձևով վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

vii. Նույն արձանագրությամբ, Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 454-րդ հոդվածի 4-րդ մասով, «Էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 1-ին, 2-րդ և 5-րդ հոդվածներով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 13-րդ ենթակետով, որոշել է «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ի կողմից նման

եղանակով ներկայացված պայմանագրի նախագիծը մերժել և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել գնման ընթացակարգի հաջորդ տեղ զբաղեցրած «Կորյուն Ժամհարյան Սոսիկի» Ա/Ձ-ին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9742-2021 գրությամբ «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային

եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Երևանի քաղաքապետարանի կողմից Նորք-Մարաշ վարչական շրջանի փաստաթղթերի արխիվացման՝ գիտահետազոտական մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով 24.08.2021թ.-ին հայտարարված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/119» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 9.5-րդ կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից Նորք-Մարաշ վարչական շրջանի փաստաթղթերի արխիվացման՝ գիտահետազոտական մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով 28.04.2021թ.-ին հայտարարված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/119» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 5.1-րդ կետի համաձայն՝ «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ն ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից, ինչով պայմանավորված Հանձնաժողովի քարտուղարի կողմից 18.05.2021թ.-ին armeps.am համակարգի միջոցով մասնակցի annaagadjanyan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է պայմանագրի նախագիծը և վերջինիս առաջարկվել է կնքել և երկու օրինակից ներկայացնել պայմանագիրը 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հանձնաժողովի 02.06.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ն պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 01.06.2021թ.-ը/ պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը, սակայն օրենսդրությամբ սահմանած ժամկետում մասնակցի կողմից պատվիրատուի էլեկտրոնային փոստին է ներկայացվել պայմանագրի նախագիծը, պայմանագրի և որակավորման ապահովումները՝ տուժանքի ձևով վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ուստի Հանձնաժողովը որոշել է վերջինիս կողմից նման եղանակով ներկայացված պայմանագրի նախագիծը մերժել:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից Նորք-Մարաշ վարչական շրջանի փաստաթղթերի արխիվացման՝ գիտահետազոտական մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով 25.11.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/119» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 18.05.2021թ.-ին Բողոքաբերին ուղարկված ծանուցմամբ, վերջինիս տրված տասն աշխատանքային օրյա ժամկետը ավարտվում էր ոչ թե 01.06.2021թ.-ը ներառյալ, ինչպես նշվել է 02.06.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ, այլ 02.06.2021թ.-ը ներառյալ, քանի որ «Տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության տոնը նշվում է մայիսի 28-ին և այն ոչ աշխատանքային օր է:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովը 02.06.2021թ.-ին ժամը 15:00-ին հրավիրելով նիստ և կայացնելով

Բողոքաբերի հայտը մերժելու մասին որոշում, գործել է ոչ իրավաչափ, քանի որ մասնակցի կողմից պայմանագրի ստորագրված տարբերակը ներկայացնելու համար՝ Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրյա ժամկետը լրանալու էր 02.06.2021թ.-ը ներառյալ:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ օրենսդիրը, պայմանագրի ապահովում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 10 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ պայմանագրի և որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորությունները: Ուստի Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու մասին:

Ամբողջացնելով վերոգրյալները, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ, նման պայմաններում, եթե առկա է Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների խախտում, ապա դրանից բխող ցանկացած գործողություն, ինքնաբերաբար դառնում է անհիմն կամ խախտմամբ կատարված:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերոնշյալներով իրավական և փաստական հանգամանքերի հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր

գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև հրաժարվում է պայմանագիր կնքելուց: Սույն գործում առկա փաստերով չի հիմնավորվում, որ Մասնակցի կողմից խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, կամ որ վերջինս հրաժարվել է պայմանագիր կնքելուց, որն էլ կհանգեցներ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությամբ սահմանված դրույթների կիրառմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9742-2021 գրությամբ «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/161 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**